փոխանք կը գտնեն սնդուկներու մէջ արծաթագործ և արծաթապատ խաչեր և աւետարաններ, սկիհներ և բուրվառներ. այլք՝ պատերէն իջեցընելով սրբալոյս մեռոնիւ օծեալ պատկերքը՝ կը պատեն պաստառներով։ Եթէ կարելի լինէր չալակել տանել գեղեցկաշէն եկեղեցիքը, անշուշտ կը տանէին[1]։ Ի՛նչ որ կարելի եղած է՝ տարել են. մասնաւոր շնորհակալութեան արժանի են ծանրագին մագաղաթեայ ձեռագիրները[2] խնամքով տանելնուն համար, որք ցարդ Նախիջեւանու եկեղեցեաց պահարաններուն մէջ կը պահուին։

Վշտագին ներկայ և անստոյգ ապագայ։ Կը թողուն կը մեկնին Հայք՝ իրենց 400 տարուան հայրենիքէն. այլ այն երկար տարեաց պարագայիւք յօդուած կապերը, մէկ հրամանաւ կամ քաղաքականութեան մի հարուածով չեն քակուիր. կը դառնան՝ կը դառնան ետևնին կը նային, մինչև որ քաղաքաց և գիւղից հեռքը, Ս. Եկեղեցեաց խաչերը հորիզոնին հաւասարին։ Երբ ամենայն ինչ կ'անհետանայ, հեղձամղձուկ սրտերնին ամուր կը կնքեն նշանաւ Ս. Խաչի, որ արդէն մեզի ընդդէմ ամենայն ցաւոց և վշտաց ապաւէն տրուած է, և առաջ կը վարեն ճանապարհնին։ Պառաւներ և այլ անկարող ծերեր՝ կարասեաց սայլերուն վրայ կը ծգտած, նոյն և մատաղերամ մանկտին կա-

1 Շատ եկեղեցեաց քանդակազարդ դռներ և այլ շատ մարմարիոնէ գերեզմանաց խաչքարինք տարել են հետերնին գաղթական Հայք։

2 Ճանապարհորդութեանս զլխաւոր նպատակն այդ ձեռագիրքն էին, յորս կը յուսար Սէ՝՝՝